ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ[1]

ՍԱՄՎԵԼ ՊՈՂՈՍՅԱՆ

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ, ՀՀ, Երևան

Էլ. հասցե՝ poghosyansamvel@yahoo.com

ԱՐՄԻՆԵ ԵՓՐԻԿՅԱՆ

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ, ՀՀ, Երևան

Էլ. հասցե՝ armineeprikyan@mail.ru

ՌԱՄԵԼԱ ՍԱՐԳՍՅԱՆ

Երևանի հ. 64 հիմնական դպրոց, ՀՀ, Երևան

Էլ. հասցե՝ sargsyan.ramela@mail.ru

DOI: 10.24234/scientific.v1i51.304

ԱՄՓՈՓՈՒՄ

Արդի կրթական հարացույցում հասարակագիտության դասավանդման արդյունավետությունը պայմանավորված է ակտիվ և մասնակցային մեթոդների ներդրմամբ, որոնց շարքում առանցքային նշանակություն ունի նախագծային ուսուցումը: Սույն հոդվածում վերլուծվում են նախագծային մեթոդի կիրառման մեթոդաբանական առանձնահատկությունները՝ որպես սովորողների քննադատական մտածողության և քաղաքացիական դիրքորոշման ձևավորման արդյունավետ գործիք: Հետազոտության տեսական հիմքը խարսխված է կոնստրուկտիվիզմի հայեցակարգի (Ժ. Պիաժե, Լ. Վիգոտսկի) և Ջ. Դյուիի «գործունեության միջոցով ուսուցման» սկզբունքների վրա:

[1] Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՄՄՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ (Գիտական ծրագիր № 10-5/ՏԲ-24):

Հետազոտության գործնական հենքը Երևանի թիվ 64 հիմնական դպրոցի 9-րդ դասարանի աշակերտների հետ իրականացված միջառարկայական նախագիծն է, որը նվիրված է Հայաստանի և Ֆրանսիայի պետական խորհրդանիշների համեմատական քննությանը: Համադրելով հասարակագիտության և ֆրանսերենի ինտեգրված ուսուցման հնարավորությունները՝ աշխատանքում կիրառվել է հետազոտական քայլաշարի պարույրաձև մոդել, որն ապահովում է գիտելիքի աստիճանական կուտակումն ու վերացարկումը:

Համեմատական վերլուծությունը բացահայտել է սովորողների վերլուծական հմտությունների որակական աճ. ֆրանսիական խորհրդանիշներում հանրապետական-քաղաքացիական արժեքների և հայկականում պատմական-հոգևոր տոկունության շեշտադրումների վերհանումը նպաստել է ազգային ինքնության և համամարդկային արժեքների խորքային ընկալմանը: Նախագծի շոշափելի արդյունքը աշակերտների կողմից ստեղծված երկլեզու պատկերագիրքն է: Հետազոտությունն ապացուցում է, որ նախագծային ուսուցումը խթանում է ինքնուրույն հետազոտական գործունեությունը, զարգացնում է փաստարկված դիրքորոշում արտահայտելու կարողունակությունը և նպաստում է միջառարկայական կապերի ամրապնդմանը ժամանակակից հանրակրթության համատեքստում:

Բանալի բառեր՝ *նախագծային մեթոդ, հասարակագիտություն, պետական խորհրդանիշներ, քաղաքացիական գիտակցություն, համեմատական վերլուծություն, միջառարկայական կապեր, ազգային ինքնություն:*

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ըստ գործող չափորոշչի՝ հիմնական դպրոցում նախատեսվում է տարաբնույթ աշխատանքների կողքին վերլուծական աշխատանք, էսսեի, գիտական աշխատանքի, գործնական գրությունների ուսուցում, իսկ վերառարկայական հմտություններն ամրապնդելու և զարգացնելու համար նախագծային և հետազոտական աշխատանքի իրականացում: Նախագծային ուսուցումը հանդես է գալիս որպես ուսուցման ակտիվ և մասնակցային բնույթը ապահովող ամենաարդյունավետ մեթոդներից մեկը: Պետական խորհրդանիշների՝ որպես ուսումնասիրության օբյեկտի ընտրությունը պատահական չէ. դրանք ազգային ինքնության, պատմական հիշողության և քաղաքական արժեքների խտացված արտահայտություններն են: Խորհրդանիշների ուսումնասիրությունը նպաստում է պետություն-քաղաքացի փոխհարաբերությունների գիտակցմանը և քաղաքացիական պատասխանատվության ամրապնդմանը:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության մեթոդաբանական հիմքը կառուցված է մանկավարժության որոշ սկզբունքների, դասավանդման որոշ մեթոդների՝ քննարկումներ, պատմական փաստերի համեմատական վերլուծություն և նախագծային ուսուցման մեթոդի վրա: Աշխատանքի նպատակն է եղել գործնականում փորձարկել նախագծային մեթոդի արդյունավետությունը՝ որպես հասարակագիտության դասավանդման ընթացքում սովորողների քննադատական մտածողության և քաղաքացիական դիրքորոշման ձևավորման հիմնական գործիք:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Նախագծային մեթոդի կիրառման տեսական հիմքերը խարսխված են Ջոն Դյուիի և Վիլիամ Կիլպատրիկի «գործունեության միջոցով ուսուցման» գաղափարախոսության վրա: Ժամանակակից մանկավարժության մեջ նախագծային աշխատանքը դիտարկվում է որպես ինտեգրատիվ տեխնոլոգիա, որը թույլ է տալիս սովորողին հանդես գալ հետազոտողի դերում (Чечель, 1998):

Նախագծային ուսուցումը հենվում է կառուցողականության (կոնստրուկտիվիզմ) վրա, ըստ որի՝ սովորողը նոր գիտելիքը կառուցում է նախորդ փորձի և միջավայրի հետ փոխազդեցության արդյունքում (Томина, 2011): Այս տեսության առանցքային դեմքերն են Ժան Պիաժեն և Լև Վիգոտսկին: Ժ. Պիաժեն պնդում էր, որ գիտելիքը ձեռք է բերվում ոչ թե մեխանիկական փոխանցմամբ, այլ անձնական կառուցման՝ «կոնստրուկցիայի» ճանապարհով: Պիաժեն, ինչպես նաև Ջ. Բրունները, ուսուցման արդյունավետությունը պայմանավորում էին սովորողի ինտելեկտուալ հասունությամբ և նոր ու արմատացած գիտելիքների համադրմամբ՝ կարևորելով նաև ուսուցման միջավայրը (Bada, 2015):

Ուսումնական գործընթացում համեմատական վերլուծության, հիմնավորված փաստարկման և բազմաբնույթ աղբյուրների հետ աշխատանքի ինտեգրումը նպաստում է սովորողների մոտ պատմական գործընթացների նկատմամբ քննադատական մոտեցման որակական աճին: Տեքստային վերլուծության, խնդրահարույց հարցերի և համեմատական մոտեցումների կիրառումը զգալիորեն զարգացնում է աշակերտների վերլուծական հմտությունները (Graves, 2021): Պատմության ուսուցման ակտիվ մեթոդները (այդ թվում՝ կենսական իրավիճակների պրոյեկտումն ու նախագծային աշխատանքը) ապահովում են ենթատեքստային ընկալման և պատճառահետևանքային կապերի վերլուծության բարձր արդյունավետություն (Graves, 2023):

Սովորողների կողմից քննադատական դատողությունների արտահայտման կարևոր նախապայման է մասնագիտական բառապաշարի և լեզվական կաղապարների

տիրապետումը (Жиркова, 2023)։ Տերմինաբանական գրագիտությունը ուղղակիորեն ազդում է պատմական վերլուծության ընթացքում դիրքորոշումը հիմնավորելու (Zanden, et al., 2020)։

Լ. Վիգոտսկու «Մոտակա զարգացման գոտու» տեսությունը նախագծային ուսուցման հիմնաքարերից է՝ սովորողը, համագործակցելով ուսուցչի կամ ավելի փորձառու ընկերների հետ, կարող է հասնել զարգացման ավելի բարձր մակարդակի, քան ինքնուրույն աշխատելիս (Harland, 2003)։ Այս գործընթացում թույլ տրված սխալները խթանում են քննադատական մտածողությունը և ինքնուրույնությունը։ Կոլեկտիվ աշխատանքի կարևորությունը շեշտվել է նաև խորհրդային մանկավարժության մեջ՝ որպես սոցիալական համախմբման միջոց (Варава, 2019)։

Ըստ այդմ մեր կառուցած նախագիծը՝ ըստ գերիշխող գործունեության հետազոտական-որոնողական է, ըստ առարկայական-բովանդակային ոլորտի՝ միջառարկայական, ըստ նախագծի համակարգման (կոորդինացիայի)՝ բացահայտ, ըստ համագործակցության բնույթի՝ դասարանային, ըստ նախագծի անդամների քանակի՝ դասարանի համակազմով, ըստ նախագծի իրականացման շարունակականության՝ ուսուցչի հայեցողությամբ։ Նախագծում կարևորել ենք հետևյալ քայլերը՝ խթանում - կառուցում - մշակում - նյութի խմբավորում-համակարգում - գիտելիքի կուտակում - փորձի հարստացում-զարգացում-կիրառում։

- Նախագիծն իրականացվել է Երևանի թիվ 64 հիմնական դպրոցում՝ 9-րդ դասարանի 7 աշակերտների մասնակցությամբ։ Միջառարկայական կապն ապահովվել է հասարակագիտության և ֆրանսերենի ուսուցիչների (Ռամելա Սարգսյան, Նարինե Էլիզբարյան) համատեղ աշխատանքի շնորհիվ։ Դա թույլ է տվել աշակերտներին տեսնել գիտելիքի ամբողջականությունը՝ դուրս գալով նեղ առարկայական սահմաններից։

Նախագծային աշխատանքը կազմակերպվել է դասական փուլային տրամաբանությամբ։ Այն նախատեսում է թեմայի ընտրություն և հիմնավորում, նպատակների և խնդիրների ձևակերպում, տեղեկատվության հավաքագրում տարբեր աղբյուրներից, միջառարկայական վերլուծություն, ստեղծագործական և հետազոտական առաջադրանքների իրականացում, ինչպես նաև արդյունքների ամփոփում և ներկայացում։

Սովորողների հետ քննարկվել և որոշարկվել է նախագծային աշխատանքի ամբողջականությունն արտացոլող պարույրաձև տրամագիրը, որի յուրաքանչյուր պարույրը հետազոտական աշխատանքի մեկ կրիչ է։ Սրանով պարզորոշ է դարձել բովանդակային մասը և համակարգվածությունը։ Այս բնույթի և բովանդակության հետազոտությունը պարունակում է նորույթ՝ տեքստի ուսումնասիրությունը իրականացնելու ամենաանսպասելի ուղղություններով, ինչը ընդլայնում է

սովորողների մտածողությունն ու աշխարհընկալումը: Հանձնարարվել է խմբերին և անհատական աշխատանք կատարողներին ընտրել (մենք վիճակահանություն ենք կատարել) ուսումնասիրման համար մեկ թեմատիկ ուղղություն և կատարել համակարգված աշխատանք: Համագործակցային խմբերը կատարել են հետազոտական աշխատանք՝ ըստ պարույրի հատվածների: Սովորողներին առաջարկվել է վերոնշյալ ուղղություններին հարող մի շարք նոր կոդեր. դրանք բովանդակային տեսանկյունից առանցքային, հիմնական թեմային (հիպերմոտիվ) ստորադասվող բնագրային որոշակի իրականություններից վերացարկված բովանդակա-կառուցվածքային միավորներ են:

Պարույրի փուլ՝ (շրջան) - հետազոտության կրիչներն են՝ դրոշներ և գույներ, զինանշաններ, պատմական ծագում, մշակութային իմաստ, ծիսական օգտագործում, ժամանակակից նշանակություն: Համագործակցային խմբերը կատարում են հետազոտական աշխատանք՝ ըստ պարույրի հատվածների:

Ընտրությունը կատարվել է ուսումնական նախագծի շրջանակում երկու ժողովուրդների խորհրդանիշների համեմատական - զուգադրական ուսումնասիրության նպատակով՝ շեշտադրելով խորհրդանիշները ճանաչելու, ընկալելու, ընդհանություններ գտնելու կարողությունների ձևավորումը: Ներկայացվող աշխատանքը ընդամենը մոդել է, որը կարող է ենթադրել տարբերակային մոտեցումներ:

Համեմատական զուգադրում

Նախագծի ամենաբարդ հատվածը համարվում է վերլուծականը (Жиркова, 2023): Հիմնահարցը վերլուծելու և համեմատական սկզբունքով ավելի մատչելի ու հասկանալի ներկայացնելու նպատակով աշակերտները ստեղծեցին համեմատական աղյուսակներ: Նրանք բացահայտեցին, որ եթե ֆրանսիական խորհրդանիշներում շեշտադրված են հանրապետական արժեքներն ու քաղաքացիական ազատությունները, ապա հայկականում՝ պետականության շարունակականությունը և հոգևոր տոկունությունը: Միևնույն ժամանակ աշակերտները նկատեցին նաև նմանություններ՝ ազատության, անկախության, ժողովրդի միասնության և հայրենասիրության գաղափարների առկայությունը երկու երկրների խորհրդանիշներում:

Այս աշխատանքը միտված է խորացնելու սովորողի հետազոտական, մտածական, հաղորդակցական, սոցիալական, ինքնակազմակերպման հմտությունները, ձևավորելու բարոյական բարձր արժեքներ, սիրելու և գնահատելու սեփական երկիրն ու ժողովրդին, ազգային մշակույթը, ինչպես նաև ճանաչելու օտար երկրների պատմությունը, մշակույթը:

Բովանդակային-համեմատական վերլուծություն

ՀՀ և Ֆրանսիայի պետական խորհրդանիշների գաղափարական-իմաստային զուգադրումը բացահայտեց հետևյալ օրինաչափությունները.

Գույների և տարրերի սիմվոլիզմ. Եթե ֆրանսիական եռագույնը խտացնում է հանրապետական «Ազատություն, հավասարություն, եղբայրություն» կարգախոսը, ապա հայկական դրոշի գույները և զինանշանի տարրերը (Արարատ լեռ, պատմական թագավորությունների խորհրդանշաններ) առավելապես շեշտադրում են պատմական հիշողությունը և պետականության վերականգնման գաղափարը։

Օրհներգերի գաղափարախոսություն. Երկու երկրների օրհներգերում էլ («Մեր Հայրենիք» և «Մարսելյեզ») առանցքային է ազատության և հայրենասիրության գաղափարը, սակայն ֆրանսիական դեպքում այն արտահայտված է հեղափոխական ոգով, իսկ հայկականում՝ որպես դարավոր պայքարի և տոկունության արդյունք։

Պատմամշակութային համատեքստ. Վերլուծությունը ցույց տվեց, որ ֆրանսիական խորհրդանիշները 18-րդ դարի Մեծ հեղափոխության և քաղաքացիական հավասարության արդյունք են, մինչդեռ հայկականը՝ քրիստոնեական մշակույթի և ինքնության պահպանման, պետականության վերականգնման ձգտման արտացոլանք։

Այսպիսով, աշակերտների եզրահանգումները ցույց տվեցին, որ թեև երկու երկրների պատմական ուղիները տարբեր են, երկուսի դեպքում էլ խորհրդանիշները ծառայում են որպես ազատության և ժողովրդի միասնական կամքի արտահայտություն։

Նախագծի առանձնահատուկ մեթոդական նորույթը և շոշափելի արդյունքը աշակերտների կողմից ստեղծված երկլեզու գիրքն է (հայերեն և ֆրանսերեն), որը փաստում է սովորողների աշխարհայացքի ընդլայնման և սեփական ազգային արժեքները միջազգային համատեքստում ընկալելու մասին։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

- Ճանաչողական ռազմավարությունների ձևավորման համատեքստում, մասնավորապես՝ հստակեցնող հարցադրումների կատարման, տրամաբանական հակասությունների բացահայտման և սեփական դիրքորոշման փաստարկման կարողությունների զարգացման առումով արձանագրվել է դրական դինամիկա։
- Դասավանդման այնպիսի մեթոդների կիրառումը, ինչպիսիք են քննարկումները, պատմական փաստերի համեմատական վերլուծությունը, նպաստում է սովորողների տրամաբանական փաստարկման կարողությունների զարգացմանը։
- Վերլուծությունը ցույց տվեց, որ ինտերակտիվ քննարկումները հնարավորություն են տալիս սովորողներին ոչ միայն ձևակերպել դատողություններ, այլև հիմնավորել դրանք պատմական տեքստային ապացույցներով։ Ավագ դպրոցում քննադատական մտածողության զարգացման

համար կարևոր են վերլուծության, խնդրահարույց հարցերի և համեմատական մոտեցումների կիրառումը:

- Աշակերտների կողմից ստեղծված երկլեզու գիրքը դարձավ նախագծի շոշափելի արդյունքը, որը փաստում է նրանց աշխարհայացքի ընդլայնման և սեփական ազգային արժեքները միջազգային համատեքստում ընկալելու մասին: Համեմատական այս մոտեցումը օգնեց սովորողներին հասկանալ, որ պետական խորհրդանիշները ոչ թե լոկ պատկերներ են, այլ ժողովրդի միասնական կամքի և քաղաքական արժեքների խտացված արտահայտություն:
- Կարելի արձանագրել, որ իրականացված ուսումնական և նախագծային աշխատանքը հասել է իր նպատակներին: ՀՀ և Ֆրանսիայի պետական խորհրդանիշների համեմատական ուսումնասիրությունը ընդլայնել է սովորողների գիտելիքային և ճանաչողական կարողությունները, ամրապնդել նրանց կարողությունը՝ մեկից ավելի տեսանկյուններից դիտարկել նույն խորհրդանիշը, ինչպես նաև նպաստել ազգային և համընդհանուր արժեքային համակարգերի ընկալմանը, ինչպես նաև լեզվական, մշակութային և քննադատական մտածողության զարգացմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Bada, S. (2015). Constructivism learning theory: A paradigm for teaching and learning. *Journal of Research & Method in Education*.

Graves, G. (2021). Developing historical critical thinking through active history learning methods. *Journal of History Education Research*.

Graves, G. (2023). Developing students' historical critical thinking through active history learning strategies. *Journal of History Education Research and Practice*.

Harland, T. (2003). Vygotsky's zone of proximal development and problem-based learning: Linking a theoretical concept with practice through action research. *Teaching in Higher Education*.

van Zanden, P., Denessen, E., Cillessen, A., & Meijer, P. C. (2020). Fostering critical thinking skills in secondary education to prepare students for university: Teacher perceptions and practices. *Research in Post-Compulsory Education*.

Варава, Ю. (2019). Теория коллективного воспитания А. С. Макаренко. *Психолого-педагогическое наследие прошлого в современной социально-педагогической деятельности*.

Жиркова, З. (2023). Основы проектной деятельности. *Методы проектной деятельности: учебное пособие для бакалавров высших учебных заведений.*

Соловьев, Г. (2018). А. С. Макаренко и В. А. Сухомлинский: Проектирование жизненного пути воспитанников. *Педагогика В. А. Сухомлинского и современное образовательное пространство дополнительного образования детей*.

Томина, Е. (2011). Педагогические идеи Джона Дьюи: История и современность. *Вестник ОГУ*.

Чечель, И. (1998). Метод проектов или попытка избавить учителя от обязанностей всезнающего оракула. *Директор школы.*

REFERENCE LIST

Bada, S. (2015). Constructivism learning theory: A paradigm for teaching and learning. *Journal of Research & Method in Education*.

Graves, G. (2021). Developing historical critical thinking through active history learning methods. *Journal of History Education Research*.

Graves, G. (2023). Developing students' historical critical thinking through active history learning strategies. *Journal of History Education Research and Practice*.

Harland, T. (2003). Vygotsky's zone of proximal development and problem-based learning: Linking a theoretical concept with practice through action research. *Teaching in Higher Education*.

van Zanden, P., Denessen, E., Cillessen, A., & Meijer, P. C. (2020). Fostering critical thinking skills in secondary education to prepare students for university: Teacher perceptions and practices. *Research in Post-Compulsory Education*.

Varava, Yu. (2019). Teoriya kollektivnogo vospitaniya A. S. Makarenko *(The theory of collective education of A. S. Makarenko). Psikhologo-pedagogicheskoe nasledie proshlogo v sovremennoi sotsial'no-pedagogicheskoi deyatel'nosti*.

Zhirkova, Z. (2023). Osnovy proektnoi deyatel'nosti. Metody proektnoi deyatel'nosti: uchebnoe posobie dlya bakalavrov vysshikh uchebnykh zavedenii *(Fundamentals of project-based activity. Methods of project-based activity): A textbook for bachelor's students.*

Solov'ev, G. (2018). A. S. Makarenko i V. A. Sukhomlinskii: Proektirovanie zhiznennogo puti vospitannikov *(A. S. Makarenko and V. A. Sukhomlinsky: Designing the life path of pupils). Pedagogika V. A. Sukhomlinskogo i sovremennoe obrazovatel'noe prostranstvo dopolnitel'nogo obrazovaniya detei*.

Tomina, E. (2011). Pedagogicheskie idei Dzhona D'yui: istoriya i sovremennost' (*Pedagogical ideas of John Dewey: History and modernity). Vestnik OGU*.

Chechel', I. (1998). Metod proektov ili popytka izbavit' uchitelya ot obyazannostei vseznayushchego orakula *(The project method or an attempt to relieve the teacher of the duties of an all-knowing oracle). Direktor shkoly*.

РЕЗЮМЕ

МЕТОДОЛОГИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ ПРОЕКТНОГО ОБУЧЕНИЯ В ПРОЦЕССЕ ПРЕПОДАВАНИЯ ОБЩЕСТВОЗНАНИЯ

Самвел Погосян, Армине Еприкян, Рамела Саргсян

В статье рассматривается применение метода проектного обучения на уроках обществознания на примере работы с учащимися 9-го класса основной школы № 64 Еревана. Цель исследования - выявить педагогическую эффективность проектного метода на основе сравнительного анализа государственных символов Республики Армения и Французской Республики.

Методология исследования включает сравнительно-аналитический, описательный, историко-аналитический методы и метод педагогического наблюдения. В рамках проекта учащиеся занимались сбором, классификацией и синтезом информации из различных источников: учебников, энциклопедий и официальных сайтов. Использовался междисциплинарный подход, реализованный в сотрудничестве учителей обществознания и французского языка.

Результаты работы показали, что изучение государственных символов не только способствует глубокому пониманию национальной идентичности и исторического пути, но и развивает критическое мышление, аналитические способности и гражданское самосознание учащихся. Сравнительный анализ позволил выявить, как различные исторические пути (республиканские ценности во Франции и борьба за государственность и духовная стойкость в Армении) отражаются в национальных символах. Практическим результатом проекта стало создание двуязычной книги (на армянском и французском языках), представляющей символику обеих стран. Исследование подтверждает, что проектное обучение является эффективным инструментом повышения вовлеченности учащихся и формирования ключевых жизненных навыков.

Ключевые слова: *преподавание обществознания, метод проектов, проектное обучение, сравнительный анализ государственных символов, национальные ценности, гражданское сознание, междисциплинарные связи.*

SUMMARY

METHODOLOGICAL FEATURES OF PROJECT-BASED LEARNING IN THE TEACHING OF SOCIAL STUDIES

Samvel Poghosyan, Armine Yeprikyan, Ramela Sargsyan

The article examines the application of the Project-Based Learning (PBL) method in Social Studies classes, specifically within the 9th grade of Yerevan Basic School No. 64. The research aims to identify the pedagogical effectiveness of the project method through a comparative analysis of the state symbols of the Republic of Armenia and the Republic of France.

The methodology of the study includes comparative-analytical, descriptive, historical, and pedagogical observation methods. In the framework of the project, students were involved in collecting, classifying, and synthesizing information from diverse sources, including textbooks, encyclopedias, and official websites. An interdisciplinary approach was utilized, involving collaboration between Social Studies and the French language teachers.

The results of the project demonstrate that the study of state symbols not only fosters a deeper understanding of national identity and historical continuity but also significantly develops students' critical thinking, analytical skills, and civic consciousness. The comparative analysis revealed how different historical paths (republican values in France vs. the struggle for statehood and spiritual resilience in Armenia) are reflected in national symbols. A tangible outcome of the work was the creation of a bilingual book (Armenian and French) presenting the symbols of both nations. The study confirms that PBL is an effective tool for increasing student engagement and developing vital life skills.

Keywords: *Social Studies teaching, Project-Based Learning (PBL), comparative analysis of state symbols, national values, civic consciousness, interdisciplinary approach.*

Հոդվածը ստացվել է՝ 22.02. 2026

Հոդվածն ուղարկվել է գրախոսման՝ 29.02. 2026

Հոդվածը երաշխավորվել է տպագրության՝ 15.04.2026